ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏ ՏԻՐ ԺԱՆ ՄԻՇԵԼ ԹԻԵՐԻՆ « Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ » ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ
ՏԻՐ ԺԱՆ ՄԻՇԵԼ ԹԻԵՐԻՆ
ՈՐ Ի ՓԱՐԻԶ, Ի ՖՐԱՆՍԱ

Այսու Հայրապետական գրով եւ ջերմ սիրով կ՝ողջունենք Ձեր ներկայութիւնը հայ ժողովուրդի հաւատքի բերդ, Սրբոյ Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներու ներքեւ, ուր, վստահ ենք, Դուք եւս կը զգաք և կը շնչէք հարազատագոյն ապրումներով:

Եւ արդարեւ, մենք քաջ գիտենք, որ Դուք երկար տարիներ ծառայած էք մարդկութեան իբրև բժիշկ, գիտնական, պատմաբան. լեռնագնաց ուղեւորը: Եղած եք այն քիչերէն, որոնք կրցած են քարին հոգի տալ և ցոյց տալ, թէ ինչպէս քարը ամէն տեղ քար է, ճիշտ է, բայց երբ այդ քարը քարի վրայ կուգայ, կառոյցի մաս կը կազմէ, այլևս այդ քարը փտոցի անկիւնն ինկած քար չէ, այլ ճարտարապետութիւն է, քարեղեն երաժշտութիւն է, արուեստ է, մարդկութեան պատմութեան մէջ ներդրում է: Դուք եղած էք նաև այն քիչերեն, որոնք կրցած են քարին· լեզու տալ և քարուքանդ, աւերակ վանքերէն անդին լսելի դարձնել նաև այդ վանքերու երգը, այնտեղէն դէպի երկինք բարձրացող աղօթքները և տեսանելի դարձնել այդ տաճարները կառուցող ճարտարապետներու կառուցողական արուեստի շնորհքը:

Մենք հաճոյքով հետևած ենք Ձեր տարիներու քրտնաջան աշխատանքին և հիացած, թէ ինչպէս երիտասարդի աւիւնով քալած էք անկոխ արահետներէ, հասած էք անմատչելի թուացող գագաթներու, հեռաւոր հովիտներու մէջ ծուարած և յաճախ աշխարհէն մոռացած վանքերու: Տեսած էք վանք, նկարած էք, չափագրած էք, ուսումնասիրած էք և գրքին յանձնած Ձեր վաստակը:

Վրաստանէն Արցախ, Հայաստանի Հանրապետութեան արևելեան սահմաններէն մինչև Թուրքիոյ բազմաթիւ նահանգներու մէջ հարիւրաւոր վանքեր Ձե՛ր շնորհիւ այսօր երկրորդ կեանք մը կ՝ապրին: Մենք պատճառ ունինք երախտապարտ ըլլալու յատկապէս այն իրողութեան համար, որ դուք Վասպուրականէն Կարս ու Անի, Մշոյ աշխարհէն Սիւնեաց աշխարհ, Դաղիվանքէն մինչև Սեպուհ Լեռ քայլ առ քայլ ուսումնասիրած էք և աշխարհին բերած հայ ժողովուրդի հաւատքի արգասիքը, արուեստին

ճաշակը, կառուցելու թափը, իսկ գիտաժողովներու և այլ դահլիճներու բեմերէն Ձեր ձայնը բարձրացուցած էք մարդկութեան ժառանգ դարձած եկեղեցիներու և յուշարձաններու պահպանութեան համար, և այդ պատճառաւ այսօր համայն մարդկութիւնը աւելի գուրգուրալից վերաբերմունք ունի նախորդ սերունդներու թողած ժառանգութեան պահպանութեան համար:

Ուստի ի գնահատութիւն արուեստի, բժշկութեան, պատմութեան, ճարտարապետութեան և յատկապէս հայ մշակոյթին Ձեր բերած անգնահատելի օժանդակութեանը, Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի

Ս·ՍԷՀԱԿ – Ս·ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Կը յուսանք, որ Աստուած Ձեզ երկար տարիներու առողջ և առոյգ կեանք կը պարգեւէ, որպէսզի կարենաք երկար շարունակել Ձեր ազնիւ գործը:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22 Մայիսի
Յամի Տեառն 1999 և ի Թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/234